ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հուլիսի 2014 թ. Թիվ 85 - Ա

ք. Իջևան

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15 հոդվածով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Արտակարգ իրավիճակների նախարարի 2013 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 1032-Ա հրամանի պահանջները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝

1) <<Արտակարգ իրավիճակներում ՀՀ Տավուշի մարզի բնակչության պաշտպանության պլան>>-ը՝ համաձայն հավելված 1-ի,

2) <<ՀԱԷԿԻ-ի միջուկային և (կամ) ճառագայթային վթարի դեպքում ՀՀ Տավուշի մարզի բնակչության պաշտպանության պլանը>>՝ համաձայն հավելված 2-ի,

3) <<Ուժեղ երկրաշարժի դեպքում ՀՀ Տավուշի մարզի բնակչության պաշտպանության պլանը>>՝ համաձայն հավելված 3-ի,

4) <<Քիմիական վտանգավոր օբյեկտների վթարի դեպքում ՀՀ Տավուշի մարզի բնակչության պաշտպանության պլանը>> ՝ համաձայն հավելված 4-ի,

5) <<Ջրամբարի պատվարի փլուզման սպառնալիքի և փլուզման դեպքում ՀՀ Տավուշի մարզի բնակչության պաշտպանության պլանը >>՝ համաձայն հավելված 5-ի,

6) <<Խոշոր հրդեհապայթյունավտանգ օբյեկտների վթարի դեպքում ՀՀ Տավուշի մարզի բնակչության պաշտպանության պլանը >>՝ համաձայն հավելված 6-ի,

7) <<Գարնանային վարարումների, ջրհեղեղների և սելավի դեպքում ՀՀ Տավուշի մարզի բնակչության պաշտպանության պլանը >>՝ համաձայն հավելված 7-ի,

8) <<Խոշոր անտառային հրդեհների առաջացման դեպքում ՀՀ Տավուշի մարզի բնակչության պաշտպանության պլանը >>՝ համաձայն հավելված 8-ի,

9) <<Խոշոր քարաթափումների և սողանքի առաջացման ժամանակ ՀՀ Տավուշի մարզի բնակչության պաշտպանության պլանը >>՝ համաձայն հավելված 9-ի,

10) <<Կոմունալ-էներգետիկ ցանցերում խոշոր վթարի դեպքում ՀՀ Տավուշի մարզի բնակչության պաշտպանության պլանը >>՝ համաձայն հավելված 10-ի,

11) <<Համաճարակների դեպքում ՀՀ Տավուշի մարզի բնակչության պաշտպանության պլանը>>՝ համաձայն հավելված 11-ի:

2.ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2013թվականի փետրվարի 8-ի թիվ 14-Ա որոշումը:

3. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզային փրկարարական վարչության պետին՝

1) կազմակերպել սույն որոշման համապատասխան հավելվածներում համապատասխան ճշգրտումներ հունվարի 1-ի դրությամբ և ճշգրտմանը ներգրավվել բոլոր շահագրգիռ մարմիններին, իսկ անհրաժեշտության դեպքում նախապատրաստել փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշման նախագիծ,

2) մինչև յուրաքանչյուր տարվա ապրիլի 1-ը ճշգրտված տարբերակը առաքել ընդգրկված մարմիններին:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել ՀՀ ԱԻՆ ՓԾ Տավուշի մարզային փրկարարական վարչության պետի վրա:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել ՀՀ Տավուշի մարզպետին:

ՄԱՐԶՊԵՏ Հ.ԱԲՈՎՅԱՆ

09 հուլիսի 2014թ.
ք. Իջևան